ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 1167-Լ	*Տեսակը*	Ինկորպորացիա
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	Հրապարակվել է կայքում 16.07.2020	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	09.07.2020
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	14.07.2020
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	17.07.2020	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Ծանուցում

14.03.24 N 381-Լ որոշումն ունի անցումային դրույթ:

Կապեր այլ փաստաթղթերի հետ

Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԵՐԵԽԱ ՈՒՆԵՑՈՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 հուլիսի 2020 թվականի N 1167-Լ

ԵՐԵԽԱ ՈՒՆԵՑՈՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

(նախաբանը փոփ. 14.03.24 N 381-Լ)

1. Հաստատել երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության ծրագրի իրականացման պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն հավելվածի:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ն. Փաշինյան**

2020 թ. հուլիսի 14
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2020 թվականի
հուլիսի 9-ի N 1167-Լ որոշման

Օ Ր Ի Ն Ա Կ Ե Լ Ի Ձ Ե Վ

ԵՐԵԽԱ ՈՒՆԵՑՈՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

Քաղ. Երևան ____ _____ 2020 թ.

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (այսուհետ՝ լիազոր մարմին)՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար _____ -ի, որը գործում է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 700-Լ որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության հիման վրա, և _____ կազմակերպությունը՝ ի դեմս _____-ի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ կազմակերպություն), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն պայմանագրով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մայիսի 14-ի N 968-Լ որոշմամբ հաստատված՝ երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության ծրագրերի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության փոխանակության և դրամական միջոցների փոխանցման հետ կապված հարաբերությունները լիազոր մարմնի և կազմակերպության միջև (այսուհետ՝ կողմեր)։

2. Սույն պայմանագրում հասկացությունները կիրառվում են երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության 2024-2026 թթ. ծրագրերի իմաստով։

(2-րդ կետը փոփ. 14.03.24 N 381-Լ)

3. Սույն պայմանագրով կազմակերպությունը պարտավորվում է շահառուից ընդունել բնակարանային ապահովության պետական աջակցության ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ տեղեկությունները, ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում շահառուի կողմից ներկայացված փաստաթղթերի և առկա տեղեկությունների հիման վրա առերևույթ գնահատել շահառուի համապատասխանությունը ծրագրով սահմանված պահանջներին (ծրագրի հիմնական պայմաններին) և դրանց համապատասխանելու դեպքում՝ այդ տեղեկությունները համապատասխան ծրագրային ապահովության միջոցով ներկայացնել լիազոր մարմնին՝ համաձայն սույն պայմանագրի NN 1 և 2 ձևերի։

4. Լիազոր մարմինը պարտավորվում է շահառուին ծրագրում ընդգրկելու կամ մերժելու մասին որոշման վերաբերյալ տեղեկացնել կազմակերպությանը, ինչպես նաև շահառուին։ Ընդ որում՝ շահառուին ծրագրում ընդգրկելու մասին որոշում կայացվելու դեպքում՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում կազմակերպության բանկային հաշվին փոխանցել համապատասխան դրամական միջոցները։

5. Կողմերն անվերապահորեն ընդունում են, որ՝

1) սույն պայմանագրի շրջանակներում կազմակերպությանը փոխանցված պետական աջակցության գումարները կարող են օգտագործվել բացառապես երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության ծրագրերին համապատասխան (ծրագրերով նախատեսված նպատակներով) և չեն կարող արգելադրվել (դրվել արգելանքի տակ), բռնագանձվել կամ հաշվանցվել հաճախորդի պարտավորությունների դիմաց, կամ որևէ կերպ կանխիկացվել.

2) կազմակերպությունը Մարզում հիփոթեքի աջակցության համար հարցումը կատարում է, եթե ընդունում է շահառուին հիպոտեկային վարկ տրամադրելու որոշում, և շահառուն, ներկայացված փաստաթղթերի համաձայն, համապատասխանում է ծրագրով սահմանված պահանջներին (ծրագրի հիմնական պայմաններին).

3) շահառուին Մարզում հիփոթեքի աջակցության մասին որոշումը ուժի մեջ է լիազոր մարմնի կողմից կազմակերպությանը տեղեկացնելու օրվանից հաշված՝ 60 օրացուցային օրվա ընթացքում (60-օրյա ժամկետը լրանալուց հետո Մարզում հիփոթեքի աջակցության համար ներկայացվում է նոր դիմում).

4) երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության ծրագրերի հիմնական պայմանները սահմանված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մայիսի 14-ի N 968-Լ որոշմամբ.

5) եթե շահառուն կատարել է շահառուի և կազմակերպության միջև կնքված համապատասխան պայմանագրով նախատեսված կանխավճարը և (կամ) շահառուն կատարել է կանխավճարի (հիփոթեքային պարտավորության) ապահովագրության տարեկան ապահովագրական վճարը, ապա Մարզում հիփոթեքի աջակցության գումարը և (կամ) կանխավճարի ապահովագրության աջակցության գումարն ուղղվում է հիփոթեքային վարկի մայր գումարի մարմանը.

6) եթե երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության ծրագրերով նախատեսված գումարն ուղղվում է հիպոտեկային վարկի մնացորդային մայր գումարի վաղաժամկետ մարմանը (այդ

թվում՝ սույն կետի 5-րդ ենթակետում նշված դեպքում), ապա հիպոտեկային վարկի վաղաժամկետ մարման համար «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված տույժեր չեն գանձվում: Այս դեպքերում հիպոտեկային վարկի վաղաժամկետ մարման համար կարող է գանձվել «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքով (համապատասխան պայմանագրով) նախատեսված տուգանք՝ հետևյալ ընթացակարգով. կազմակերպությանը փոխանցված պետական աջակցության գումարից նախ մարվում են հիպոտեկային վարկի մնացորդային մայր գումարի վաղաժամկետ մարման համար նախատեսված տուգանքը, որից հետո մնացած գումարը ուղղվում է վարկի մնացորդային մայր գումարի մարմանը.

7) եթե շահառուի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հուլիսի 9-ի N 1167-Լ որոշմամբ սահմանված պայմանագիր կնքած կազմակերպության միջև համապատասխան պայմանագիրը կնքվել է 2020 թվականի հուլիս և օգոստոս ամիսներին, սակայն բնակարանային ապահովության պետական աջակցության ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ տեղեկությունները (N 1 ձև) լիազոր մարմին չեն ներկայացվել (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մարտի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մայիսի 14-ի N 968-Լ և 2020 թվականի հուլիսի 9-ի N 1167-Լ որոշումներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N 351-Լ որոշման 3-րդ կետի շրջանակներում), ապա Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մայիսի 14-ի N 968-Լ որոշման հավելվածի 21-րդ կետով սահմանված պայմաններին բավարարելու դեպքում շահառուն կարող է ընդգրկվել կանխավճարի ապահովագրության ծրագրում և ստանալ աջակցություն հաջորդ տարիների կանխավճարի ապահովագրության տարեկան ապահովագրական վճարը վճարելու համար:

(5-րդ կետը խմբ. 18.03.21 N 351-Լ, լրաց. 14.10.21 N 1678-Լ, փոփ. 14.03.24 N 381-Լ)

6. Սույն պայմանագրի ձևերը և սույն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ փաստաթղթերը (տեղեկությունները) լիազոր մարմնի և կազմակերպության միջև փոխանակվում են էլեկտրոնային եղանակով (բացառությամբ ծրագրով նախատեսված դեպքերի)՝ լիազոր մարմնի կողմից տրամադրված ծրագրային ապահովության միջոցով, իսկ պետական աջակցության գումարների վճարման համար անհրաժեշտ փաստաթղթերը (տեղեկությունները)՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված միջոցներով (CBANet միջբանկային համակարգչային ցանցի միջոցով):

II. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Կողմերն իրավունք ունեն՝

1) սույն պայմանագրով կամ օրենքով սահմանված կարգով դադարեցնելու պայմանագրի գործողությունը.

2) օրենքով սահմանված կարգով բողոքարկելու մյուս կողմի գործողությունները և (կամ) անգործությունը.

3) իրականացնելու օրենքներով նախատեսված այլ իրավունքներ:

8. Կազմակերպությունը պարտավոր է՝

1) շահառուին Մարզում հիփոթեքի աջակցության մասին որոշումը ստանալու դեպքում՝ շահառուի և կազմակերպության միջև հիպոտեկային վարկի պայմանագիր կնքվելուց, իսկ եթե աջակցությունը տրվում է անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով հիպոտեկային վարկ ստացած շահառուին՝ հիպոտեկային վարկը (վարկի հերթական փուլը) փաստացի տրամադրելուց հետո ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում, լիազոր մարմնին ներկայացնել այդ մասին տեղեկություններ՝ համաձայն N 3 ձևի.

2) շահառուին կանխավճարի ապահովագրության ծրագրերում ընդգրկելու մասին որոշումն ընդունվելու դեպքում շահառուի կողմից ամեն տարի հերթական տարեկան ապահովագրավճարի 10 տոկոսը վճարելուց հետո լիազոր մարմնին ներկայացնել այդ մասին տեղեկություններ՝ համաձայն N 4 ձևի.

3) շահառուից վերցնել գրավոր հավաստում՝ հիպոտեկային վարկի գործողության ընթացքում բնակարանը կամ անհատական բնակելի տունը օտարելու դեպքում պետական աջակցության գումարը պետական բյուջե վերադարձնելու պահանջի (պայմանի) վերաբերյալ տեղեկացված լինելու մասին, իսկ այդ ընթացքում բնակարանը օտարելու գործընթաց սկսվելու դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել լիազոր մարմնին (բացառությամբ վարկի վաղաժամկետ մարման դեպքի).

4) լիազոր մարմնին 5 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել պետական աջակցության գումարները երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության ծրագրերին համապատասխան օգտագործելու մասին՝ համաձայն N 5 ձևի, իսկ որևէ պատճառով երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության ծրագրերին համապատասխան օգտագործելու անհնարինության դեպքում պետական աջակցության գումարները վերադարձնել պետական բյուջե և այդ մասին տեղեկացնել լիազոր մարմնին՝ համաձայն N 6 ձևի.

5) ծրագրում ընդգրկելը մերժելու մասին տեղեկությունը ստանալու դեպքում այդ մասին հինգ աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել շահառուին.

6) լիազոր մարմնի կարգադրությունը (պահանջը)՝ համաձայն N 7 ձևի, ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում սխալմամբ շահառուի անվամբ փոխանցված պետական աջակցության գումարը վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ապահովելով տեղեկությունների տրամադրումը լիազոր մարմնին՝ համաձայն N 8 ձևի: Բանկը պատասխանատվություն չի կրում պետական աջակցության այն

զումարների համար, որոնք երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության ծրագրերին համապատասխան (ծրագրերով նախատեսված նպատակներով) օգտագործվել են մինչև կարգադրությունը (պահանջը) ստանալու աշխատանքային օրը (ներառյալ):

(8-րդ կետը փոփ. 14.03.24 N 381-Լ)

9. Լիազոր մարմինը պարտավոր է՝

1) ոչ ուշ, քան հարցումը ստանալուն հաջորդող 10-րդ աշխատանքային օրը կազմակերպությանը տրամադրել շահառուին ծրագրում ընդգրկելու (կամ ծրագրում ընդգրկելը մերժելու) մասին տեղեկություն՝ համաձայն N 9 ձևի.

2) սույն պայմանագրի 8-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված տեղեկությունները ստանալուց հետո տասնօրյա ժամկետում բանկային հաշվին փոխանցել համապատասխան դրամական միջոցները և այդ մասին տեղեկացնել բանկին՝ համաձայն N 10 ձևի կամ մերժել շահառուին ծրագրում ընդգրկելը և այդ մասին տեղեկացնել բանկին՝ համաձայն N 9 ձևի.

3) շահառուին Հիփոթեքի մարման աջակցության մասին որոշում կայացնելուց հետո տասնօրյա ժամկետում բանկային հաշվին փոխանցել համապատասխան դրամական միջոցները և այդ մասին տեղեկացնել բանկին՝ համաձայն N 10 ձևի.

4) «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ապահովել սույն պայմանագրի շրջանակներում իրեն հայտնի դարձած՝ բանկային գաղտնիք համարվող տեղեկությունների գաղտնիությունը:

(9-րդ կետը լրաց. 18.03.21 N 351-Լ, փոփ. 14.03.24 N 381-Լ)

III. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

10. Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունները կողմերը մատուցում են անհատույց (անվճար): Սույն պայմանագրով նախատեսված պարտականությունների կատարման հետ կապված ծախսերը չեն փոխհատուցվում:

IV. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

11. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ լրացուցիչ համաձայնագրեր կնքելու միջոցով, որոնք կհանդիսանան սույն պայմանագրի անբաժանելի մասը:

12. Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

13. Սույն պայմանագիրը լուծվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ կազմակերպության կողմից պայմանագրի կատարումից միակողմանի հրաժարվելու դեպքում: Պայմանագիրը լուծելու վերաբերյալ առաջարկությունը մի կողմը մյուս կողմին ներկայացնում է պայմանագրի լուծման նախատեսվող ժամկետից առնվազն երկու ամիս առաջ:

14. ***(կետն ուժը կորցրել է 18.03.21 N 351-Լ)***

15. Սույն պայմանագիրը լուծվում է լուծման օրվա դրությամբ պայմանագրով ստանձնած պարտավորությունները կողմերի կողմից պատշաճ կատարելու, ինչպես նաև չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասները լրիվ հատուցելու պայմանով:

16. Սույն պայմանագիրն իրավաբանական ուժ է ստանում այն կնքելու օրը:

17. Մինչև սույն պայմանագրի 6-րդ կետում նշված ծրագրային ապահովությունը ներդնելը՝ երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ տեղեկությունները (սույն պայմանագրով սահմանված ձևերը) փոխանակվում են լիազոր մարմնի և կազմակերպության միջև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված միջոցներով (CBANet միջբանկային համակարգչային ցանցի միջոցով):

V. ԿՈՂՄԵՐԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	_____ _____
Գտնվելու վայրը՝ ՀՀ, Երևան, Կառավարական 3	Գտնվելու վայրը՝ _____

Հեռ.՝ _____

Էլ. փոստ՝ _____

_____

(անունը, ազգանունը)

_____

(ստորագրությունը)

Հեռ.՝ _____

Էլ. փոստ՝ _____

ՀՎՀՀ՝ _____

_____

(անունը, ազգանունը)

_____

(ստորագրությունը)

Հայաստանի Հանրապետության
վարչապետի աշխատակազմի
ղեկավար

Է. Աղաջանյան

Ձև N 1

Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային
ապահովության պետական աջակցության
ծրագրի իրականացման պայմանագրի

Ց Ա Ն Կ

ՄԱՐԶՈՒՄ ՀԻՓՈԹԵՔԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Մարզում հիփոթեքի աջակցության համար կազմակերպությունը լիազոր մարմնին է տրամադրում՝

1) գործի համարը (ձևավորվում է ինքնաշխատ եղանակով), ծրագիրը, որի համար դիմում է շահառուն.

2) շահառուի անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը, փաստացի բնակության վայրի հասցեն, էլեկտրոնային փոստի հասցեն և հեռախոսահամարը.

3) շահառուի ամուսնու (եթե առկա է գրանցված ամուսնություն Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք ունեցող անձի հետ) անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը, ամուսնության վկայականի էլեկտրոնային լուսապատճենը (առկայության դեպքում).

4) շահառուի երեխայի (երեխաների) անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան վկայականի սերիան ու համարը.

5) շահառուի երեխայի (երեխաների) ծննդյան վկայականի էլեկտրոնային լուսապատճենը.

6) կազմակերպության հավաստումը, որ նախատեսվող գործարքը (անշարժ գույքի ձեռք բերվող և գնահատվող շուկայական գինը, կառուցվող անհատական բնակելի տան գնահատված շուկայական արժեքը, կատարվող կանխավճարի նվազագույն չափը՝ առանց ծրագրի շրջանակներում տրամադրվող աջակցության և այլն) համապատասխանում է ծրագրով սահմանված պահանջներին (ծրագրի հիմնական պայմաններին).

7) կազմակերպության հավաստումը, որ շահառուն տվել է իր համաձայնությունը՝ ձեռք բերվող բնակելի անշարժ գույքի կամ կառուցվող անհատական բնակելի տան նկատմամբ սեփականության իրավունքը շահառուի, նրա ամուսնու (եթե առկա է գրանցված ամուսնություն) անունով գրանցելու վերաբերյալ (միայն միանվագ դրամական աջակցության ծրագրի դեպքում).

8) կազմակերպության հավաստումը, որ շահառուն տվել է իր համաձայնությունը՝ հիպոտեկային վարկի գործողության ընթացքում բնակարանը կամ անհատական բնակելի տունն օտարելու դեպքում պետական աջակցության գումարը ենթակա է պետությանը վերադարձնելու պայմանի վերաբերյալ (միայն միանվագ դրամական աջակցության ծրագրի դեպքում):

(ձևը փոփ. 14.10.21 N 1678-Լ, փոփ., լրաց. 14.03.24 N 381-Լ)

Ձև N 2

Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության ծրագրի իրականացման պայմանագրի

Ց Ա Ն Կ

ՀԻՓՈԹԵՔԻ ՄԱՐՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Հիփոթեքի մարման աջակցության համար կազմակերպությունը լիազոր մարմնին է տրամադրում՝

1) գործի համարը (ձևավորվում է ինքնաշխատ եղանակով), ծրագիրը, որի համար դիմել է շահառուն.

2) շահառուի և նրա ամուսնու (եթե առկա է գրանցված ամուսնություն) անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը, փաստացի բնակության վայրի հասցեն, էլեկտրոնային փոստի հասցեն և հեռախոսահամարը, ամուսնության վկայականի էլեկտրոնային լուսապատճենը (առկայության դեպքում).

3) շահառուի երեխայի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան վկայականի սերիան ու համարը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը.

4) շահառուի երեխայի ծննդյան վկայականի էլեկտրոնային լուսապատճենը.

5) ձեռք բերված բնակելի անշարժ գույքի նույնականացման տվյալները, անշարժ գույքի ձեռք բերվող և գնահատվող շուկայական գինը.

6) հիպոտեկային վարկի տեսակը (անշարժ գույքի ձեռքբերում կամ անհատական բնակելի տան կառուցում), պայմանագրի համարը, օրը, ամիսը, տարին, գործողության ժամկետը, պայմանագրում սահմանված վարկային կոդը.

7) վերջին 12 ամիսների ընթացքում հիպոտեկային վարկի մարումները (քաղվածքը կցվում է) և մարված հիպոտեկային վարկի գծով ուշացված օրերի ընդհանուր քանակը.

8) կազմակերպության հավաստումը, որ իր կողմից իրականացված վերջին մոնիթորինգի արդյունքում հիպոտեկային վարկի նպատակայնության հետ կապված խնդիրներ չեն արձանագրվել և մոնիթորինգի իրականացման օրը, ամիսը տարին.

9) հիպոտեկային վարկի մնացորդային չափը դրամով դիմելու օրվա դրությամբ.

10) կազմակերպության հավաստումը, որ շահառուն տվել է իր համաձայնությունը՝ հիպոտեկային վարկի գործողության ընթացքում բնակարանը կամ անհատական բնակելի տունը օտարելու դեպքում պետական աջակցության գումարը ենթակա է պետությանը վերադարձնելու պայմանի վերաբերյալ.

11) կազմակերպության բանկային հաշիվը, որին փոխանցվում են պետական աջակցության գումարները:

(ձևը լրաց., փոփ. 18.03.21 N 351-Լ, փոփ. 14.10.21 N 1678-Լ, լրաց. 01.12.22 N 1828-Լ, փոփ., լրաց. 14.03.24 N 381-Լ)

Ձև N 3

Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության ծրագրի իրականացման պայմանագրի

Ց Ա Ն Կ

ՇԱՀԱՌՈՒԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Շահառուին Մարզում հիփոթեքի աջակցության մասին որոշումը ստանալու դեպքում, շահառուի և կազմակերպության միջև հիպոտեկային վարկի պայմանագիր կնքվելուց հետո կազմակերպությունը լիազոր մարմնին է տրամադրում՝

1) գործի համարը, ծրագիրը, որի համար դիմել է շահառուն.

2) շահառուի անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը, էլեկտրոնային փոստի հասցեն և հեռախոսահամարը.

3) ձեռք բերվող բնակելի անշարժ գույքի նույնականացման տվյալները, անշարժ գույքի ձեռք բերվող և գնահատվող շուկայական գինը, շուկան (առաջնային կամ երկրորդային) կամ կառուցվող անշարժ գույքի գնահատվող շուկայական առավելագույն գինը.

4) հիպոտեկային վարկի տեսակը (անշարժ գույքի ձեռքբերում կամ անհատական բնակելի տան կառուցում),պայմանագրի համարը, օրը, ամիսը, տարին, գործողության ժամկետը, պայմանագրում սահմանված վարկային կոդը.

5) փաստացի կատարված կանխավճարի չափը՝ ըստ հիպոտեկային վարկի պայմանագրի.

6) հիպոտեկային վարկի չափը, հատկացման եղանակը (միանվագ կամ փուլային).

7) ***(ենթակետն ուժը կորցրել է 14.03.24 N 381-Լ)***

8) հիպոտեկային վարկի գումարը փաստացի հատկացնելու օրը, ամիսը, տարին (եթե աջակցությունը տրամադրվում է անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով հիպոտեկային վարկ ստացած շահառուին),

9) կազմակերպության հավաստումը, որ կնքված պայմանագիրը համապատասխանում է ծրագրով սահմանված պահանջներին (ծրագրի հիմնական պայմաններին).

10) կազմակերպության բանկային հաշիվը, որին փոխանցվում են պետական աջակցության գումարները:

(ձևը փոփ. 14.03.24 N 381-Լ)

Ձև N 4

Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության ծրագրի իրականացման պայմանագրի

Ց Ա Ն Կ

ՇԱՀԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՀԵՐԹԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ 10 ՏՈԿՈՍԸ ՎՃԱՐԵԼՈՒՑ ՀԵՏՈ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Շահառուին կանխավճարի ապահովագրության ծրագրերում ընդգրկելու մասին որոշում ընդունվելու դեպքում, շահառուի կողմից հերթական տարեկան ապահովագրավճարի 10 տոկոսը վճարելուց հետո կազմակերպությունը լիազոր մարմնին է տրամադրում՝

1) գործի համարը, ծրագիրը, որի համար դիմել է շահառուն.

2) շահառուի անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը.

3) հիպոտեկային վարկի պայմանագրի համարը, օրը, ամիսը, պայմանագրում սահմանված վարկային կոդը.

4) հիպոտեկային վարկի մնացորդային մայր գումարը հիփոթեքային պարտավորության ապահովագրման պահին.

5) կազմակերպության բանկային հաշիվը, որին փոխանցվում են պետական աջակցության գումարները.

6) պայմանագրով սահմանված՝ ապահովագրված հիփոթեքային պարտավորության չափը, ապահովագրավճարի դրույքաչափը, տարեկան ապահովագրական վճարի չափը:

(ձևը լրաց. 14.10.21 N 1678-Լ, փոփ. 01.12.22 N 1828-Լ)

Ձև N 5

Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության ծրագրի իրականացման պայմանագրի

Ց Ա Ն Կ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ՝ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Կազմակերպությունը, պետական աջակցության գումարները երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության ծրագրերին համապատասխան օգտագործելու դեպքում լիազոր մարմնին է տրամադրում՝

1) գործի համարը, ծրագիրը, որի շրջանակներում փոխանցվել է գումարը.

2) կազմակերպության անվանումը, վարկային կոդը.

3) շահառուի անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը.

4) երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության ծրագրերին համապատասխան օգտագործված գումարի չափը (այդ թվում՝ առկայության դեպքում՝ հիպոտեկային վարկի մնացորդային մայր գումարի վաղաժամկետ մարման համար նախատեսված տուգանքը վճարելու համար օգտագործված գումարի չափը՝ առանձնացված), գումարը օգտագործելու օրը, ամիսը, տարին:

Ձև N 6

Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության ծրագրի իրականացման պայմանագրի

Ց Ա Ն Կ

ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՈՐԵՎԷ ՊԱՏՃԱՌՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԱՆՀՆԱՐԻՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈԴՄԻՑ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ՝ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎԵՐԱԴԱՐՁՎՈՂ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Կազմակերպությունը, պետական աջակցության գումարները որևէ պատճառով երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության ծրագրերին համապատասխան օգտագործելու անհնարինության պատճառով պետական աջակցության գումարը պետական բյուջե վերադարձնելու դեպքում լիազոր մարմնին է տրամադրում՝

1) գործի համարը, ծրագիրը, որի շրջանակներում փոխանցվել է գումարը.

2) կազմակերպության անվանումը, վարկային կոդը.

3) շահառուի անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը.

4) վերադարձված գումարի չափը և գումարը վերադարձնելու օրը, ամիսը, տարին:

Ձև N 7

Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության ծրագրի իրականացման պայմանագրի

Ց Ա Ն Կ

ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ (ՊԱՀԱՆՋՈՒՄ) ՆԵՐԱՌՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Լիազոր մարմինը սխալմամբ շահառուի անվամբ փոխանցված պետական աջակցության գումարը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վերադարձնելու համար կազմակերպությանն է ներկայացնում՝

1) գործի համարը, ծրագիրը, որի շրջանակներում փոխանցվել է գումարը.

2) կազմակերպության անվանումը, վարկային կոդը.

3) շահառուի անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը.

4) պետական բյուջե վերադարձվող գումարի չափը:

Ձև N 8

Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության ծրագրի իրականացման պայմանագրի

Ց Ա Ն Կ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎԵՐԱԴԱՐՁՎՈՂ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Կազմակերպությունից լիազոր մարմնի կարգադրության հիման վրա սխալմամբ շահառուի անվամբ փոխանցված պետական աջակցության գումարը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վերադարձնելու դեպքում լիազոր մարմնին է տրամադրում՝

1) գործի համարը, ծրագիրը, որի շրջանակներում փոխանցվել է գումարը.

2) կազմակերպության անվանումը, վարկային կոդը.

3) շահառուի անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը.

4) վերադարձված գումարի չափը և գումարը վերադարձնելու օրը, ամիսը, տարին:

Ձև N 9

Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության ծրագրի իրականացման պայմանագրի

Ց Ա Ն Կ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՇԱՀԱՌՈՒԻՆ ԾՐԱԳՐՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ (ԿԱՄ ՇԱՀԱՌՈՒԻՆ ԾՐԱԳՐՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼԸ ՄԵՐԺԵԼՈՒ) ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Լիազոր մարմինը շահառուին ծրագրում ընդգրկելու (կամ շահառուին ծրագրում ընդգրկելը մերժելու) մասին որոշում ընդունելու դեպքում կազմակերպությանն է տրամադրում՝

1) գործի համարը, ծրագիրը, որի համար դիմել է շահառուն.

2) շահառուի անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը.

3) նշում՝ շահառուին ծրագրում ընդգրկելու կամ շահառուին ծրագրում ընդգրկելը մերժելու մասին, իսկ մերժելու դեպքում՝ նաև մերժման պատճառը (ծրագրի այն հիմնական պայմանը, որին չի բավարարում շահառուն):

Ձև N 10

Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության ծրագրի իրականացման պայմանագրի

Ց Ա Ն Կ

ՇԱՀԱՌՈՒԻ ՀԱՄԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՓՈԽԱՆՑՎԱԾ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Կազմակերպությունից սույն պայմանագրի 8-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված տեղեկատվությունը ստանալուց հետո դրամական միջոցները բանկային հաշվին փոխանցելու օրը կազմակերպությանն է տրամադրում՝

1) գործի համարը, ծրագիրը, որի շրջանակներում փոխանցվում է գումարը.

2) կազմակերպության անվանումը, վարկային կոդը.

3) շահառուի անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը.

4) փոխանցված գումարի չափը, փոխանցելու օրը, ամիսը, տարին:

(հավելվածը խմբ., լրաց., փոփ. 18.03.21 N 351-Լ, լրաց., փոփ. 01.12.22 N 1828-Լ, 14.03.24 N 381-Լ)